ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ 2.4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

/քննության հարցեր/

ՄԱՐՏ 2020

Հարց 1.

2019թ.-ի հունվարի 1-ին Մայր կազմակերպությունը ձեռք է բերել Դուստր կազմակերպության բաժնետոմսերի 80%-ը: Դուստր կազմակերպությանը, սովորական բաժնետոմսերը ձեռք բերելիս,Մայր կազմակերպությունը փոխարենը առաջարկեց բաժնետոմսերի փոխանակում. Մայր ընկերության երկու բաժնետոմս՝ Դուստր ընկերության երեք բաժնետոմսի դիմաց, ելնելով այդ ամսաթվի դրությամբ նրանց շուկայական արժեքների հարաբերակցությունից: Ձեռքբերման օրվա դրությամբ Մայր Ընկերության բաժնետոմսի շուկայական արժեքը կազմում էր 3,000 դրամ, Դուստր Ընկերության բաժնետոմսի արժեքը՝ 2,500 դրամ: Փոխանակման մաս էր կազմում նաև դրամական վճարում յուրաքանչյուր բաժնետոմսի դիմաց 800 դրամ, ինչը վճարվելու է 01.01.2020թ.-ին:

Կազմակերպության զեղչման դրույքը կազմում է 10 տոկոս:

Նշված գործարքներին հաշվապահական ձևակերպում դեռևս տրված չէ:

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ տվյալ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները.

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 30.09.2019 ավարտվող տարվա վերաբերյալ

	Մայր AMD՛000	Դուստր AMD՛000
Հասույթ	68,000	32,000
Ինքնարժեք	(45,000)	(24,600)
Համախառն շահույթ	23,000	7,400
Իրացման ծախսեր	(2,500)	(1,100)
Վարչական ծախսեր	(2,800)	(1,500)
Ֆինանսական ծախսեր	(300)	-
Շահույթ մինչև հարկերը	17,400	4,800
Շահութահարկի գծով ծախս	(2,900)	(1,200)
Տարվա շահույթ	14,500	3,600
Այլ համապարփակ եկամուտներ		
Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ	1,300	-
Ընդամենը համապարփակ արդյունք	15,800	3,600

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 30.09.2019

	Մայր AMD՛000	Դուստր AMD՛000
Ակտիվներ		
Ոչ-ընթացիկ ակտիվներ		
Շենք, շինություն և սարքավորումներ	19,800	12,900
Ներդրումներ-դուստր ընկերությանը տրված փոխառություններ	1,000	-
	20,800	12,900
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	4,500	1,600
Դեբիտորական պարտքեր	5,300	2,000
Դրամական միջոցներ	-	200
	9,800	3,800
Ընդամենը ակտիվներ	**30,600**	**16,700**
Սեփական կապիտալ և պարտավորություն		
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ (յուրաքանչյուրը 1000 դրամ)	12,000	9,000
Կուտակված շահույթ	6,800	3,800
Վերագնահատման պահուստ	2,500	-
Ընդամենը սեփական կապիտալ	21,300	12,800
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	2,500	1,000
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,200	2,800
Բանկային օվերդրաֆտ	2,100	-
Շահութահարկի գծով պարտավորություն	1,500	100
	6,800	2,900
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություն	**30,600**	**16,700**

Ունենք նաև հետևյալ տեղեկությունները.

1. Ձեռք բերման ամսաթվի դրությամբ Դուստր ընկերության ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև առկա է հետևյալ տարբերությունը՝
   -Սարքավորումներից մեկի իրական արժեքը 500 հազար դրամով բարձր էր հաշվեկշռային արժեքից: Համախմբված հաշվետվություններում սա ավելացնելու է մաշվածքի ծախսը (մաշվածության ծախսը ճանաչվում է վաճառքի

ինքնարժեքում) և այդ սարքավորման մնացորդային օգտակար ծառայության ժամկետը 5 տարի է:

2. Մայր ընկերությունը որդեգրել է հիմնական միջոցների վերագնահատման մեթոդը և 30.09.2019թ.-ի դրությամբ Մայր ընկերության հիմնական միջոցների վերագնահատումները ճիշտ ընդգրկված են տրված հաշվետվություններում: Դուստր ընկերության հիմնական միջոցների աճը ձեռք բերումից հետո 30.09.2019թ.-ի դրությամբ կազմել է 100 հազար դրամ, որը սակայն հաշվետվություններում ներառված չէ:
3. 30.09.2019թ.-ին Մայր ընկերությունը փոխառություն է տվել 5% արժողությամբ Դուստր ընկերությանը:
4. Տարեվերջի դրությամբ Մայր Ընկերության կողմից Դուստր ընկերությանը կատարված վաճառքները ամսական կազմել են 200 հազար դրամ: Նշված վաճառքների արդյունքում Մայր Ընկերության հավելաշահույթը (mark up) կազմել է 25%: 30.09.2019 թ դրությամբ Դուստր Ընկերության այդ պաշարներից առկա էին 800 հազար դրամի պաշարներ:
5. Մայր ընկերությունն ունի Դուստր Ընկերությունից ստացման ենթակա Դեբիտորական պարտքեր՝ 1,8 մլն դրամի 30.09.2019 թ. դրությամբ, որը սակայն չի համապատասխանում Դուստր Ընկերության հաշվետվություններում ընդգրկված Կրեդիտորական պարտավորություններին Մայր Ընկերության հանդեպ: Այս տարբերությունը առաջացել է այն պատճառով, որ սեպտեմբերի 29-ին Դուստր Ընկերությունը բանկային փոխանցման միջոցով կատարել է 200 հազար դրամի վճարում և այն արտացոլել իր հաշվետվություններում, սակայն Մայր ընկերությունը այդ վճարումը ստացել է հոկտեմբերի 1-ին և չի ներառել հաշվետվություններում: Մայր ընկերության որդեգրած քաղաքականությունը ենթադրում է նմանատիպ տարբերությունների ճշգրտում:
6. Չվերահսկվող բաժնեմասը հաշվառվում է իրական արժեքով, այդ նպատակով Դուստր Ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքը պետք է օգտագործել:
7. Հաշվետու ամսաթվի դրությամբ գուդվիլն արժեզրկված էր 5մլն-ով: Այս արժեզրկումը պետք է ընդգրկել վարչական ծախսերում:
8. Դուստր կազմակերպության եկամուտները տարվա ընթացքում ստացվում են հավասարաչափ:

Գործարքներից առաջացող հետաձգված հարկի գումարները խնդրում անտեսված են:

Պահանջվում է՝

Ա. Պատրաստել 30.09.2019 թ.-ին ավարտվող տարվա համար համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն:

Բ. Պատրաստել 30.09.2019 թ.-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը :

(Ընդամենը 25 միավոր)

Հարց 2.

Ստորև ներկայացված է Մանանա ՍՊԸ-ի 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա փորձնական հաշվեկշռից/շրջանառության տեղեկագրից քաղվածք.

	AMD՛000	AMD՛000
Բաժնետիրական կապիտալ (յուրաքանչյուրը 500 դրամ)		45,000
Էմիսիոն եկամուտ		5,000
Չբաշխված շահույթ 01.01.2019		8,000
Վարձակալված շենք (12 տարի օգտակար ծառայության ժամկետ), 01.01.2019	48,000	
Շենք և շինություն	47,500	
Վարձակալված շենքի կուտակված մաշվածք 01.01.2019		16,000
Շենք և շինություն կուտակված մաշվածք 01.01.2019		33,500
Պաշարներ 31.12.2019	59,000	
Դեբիտորական պարտքեր	51,300	
Դրամական միջոցներ		1,300
Հետաձգված հարկ		3,200
Առևտրային կրեդիտորական պարտքեր		27,300
Հասույթ		360,000
Ինքնարժեք	286,700	
Վճարված վարձավճարներ	8,000	
Իրացման ծախսեր	21,100	
Վարչական ծախսեր	18,000	
Բանկային տոկոսավճար	500	
5% փոխարկելի պարտատոմս		30,000
Պարտատոմսի գծով վճարված տոկոսներ	1,500	
Ընթացիկ հարկ	1,200	
Ժամանակավոր տարանցիկ հաշիվ (suspense account)		13,500
	542,800	542,800

Ներքոնշյալ տեղեկատվությունը ևս վերաբերում է վերոնշյալ փորձնական հաշվեկշռին, որն անհրաժեշտ է հաշվի առնել հաշվետվությունները պատրաստելիս, քանի որ դեռևս ներառված չէ փորձնական հաշվեկշռում: Կարևոր է նաև հաշվի առնել, որ ՖՀՄՍ 16-ը կիրառվում է 01.01.2019թ.-ից առանց նախորդ տարիները վերաներկայացնելու անհրաժեշտության:

1. Ժամանակավոր տարանցիկ հաշիվը (suspense account)-ը վերաբերում է ամբողջությամբ բաժանորդագրված իրավունքների թողարկմանը (rights issue) 01.03.2019թ.-ին, յուրաքանչյուր 5 բաժնետոմսի դիմաց 1 նոր բաժնետոմս՝ 750 արժողությամբ: Ստացված դրամական միջոցները ճիշտ ձևակերպված են փորձնական հաշվեկշռում:

2. Մանանա ՍՊԸ-ն թողարկել է 300 հատ 100 հազար դրամ արժողությամբ փոխարկելի պարտատոմս 5% անվանական տոկոսադրույքով 1 հունվարի 2019 թվականին՝ 3 տարի ժամկետով: Տոկոսները վճարվում են տարեկան՝ տարեվերջին: Այս պարտատոմսերը կարող են փոխարկվել բաժնետոմսերի՝100 բաժնետոմս յուրաքանչյուրը 100 հազար արժողությամբ պարտատոմի դիմաց: Առանց փոխարկման իրավունքի նմանատիպ պարտատոմսերի տոկոսային ծախսը կազմում է 8%: Կիրառելի զեղչման տոկոսներն են.

1 դրամի ներկա արժեքի բերման գործակից	5%-ի դեպքում	8%-ի դեպքում
1 տարի	0.95	0.93
2 տարի	0.91	0.86
3 տարի	0.86	0.78

3. a) Վարձակալված շենքերի շուկայական աճը արտացոլելու նպատակով Մանանա ՍՊԸ-ն 01.01.2019թ.-ին որոշեց վերագնահատել վարձակալված շենքը՝ 36 միլիոն դրամ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետը 8 տարի է: Այս վերագնահատումը արտացոլված չէ փորձնական հաշվեկշռում: Մանանա ՍՊԸ-ն կատարում է վերագնահատման պահուստից չբաշխված շահույթ տեղափոխում, յուրաքանչյուր տարի՝ համապատասխան մաշվածությանը համաչափ: Համաձայն Մանանա ՍՊԸ-ի հարկային օրենսդրության, այս վերագնահատումից չի առաջանում հետաձգված հարկային պարտավորություն:

   b) 01.01.2019թ.-ին Մանանա ՍՊԸ-ն վարձակալում է սարքավորում վարձակալական պայմանագրի հիման վրա, որտեղ նշված է, որ ֆինանսական տոկոսը 10 է յուրաքանչյուր տարվա համար: Վճարված վարձավճարները փորձնական հաշվեկշռում ներառում են 2 մլն կանխավճարը և 6 մլն տարեկան վճարը՝ կատարված յուրաքանչյուր տարվա վերջում: Վարձավճարների ներկա արժեքը, հաշվի չառնելով կանխավճարը, կազմում է 23 մլն: Վարձակալական ժամանակահատվածը 4 տարի է:

   c) Շենք և շինությունների համար կիրառվում է 20 տոկոս նվազող մնացորդի մաշվածքի մեթոդը, բացառությամբ a) կետում նշված վարձակալված շենքի:

   Որևէ հիմնական միջոցի գծով դեռևս մաշվածք հաշվարկված չէ, և մաշվածքի ծախսը պետք է ներառել ինքնարժեքում: Սարքավորումները մաշեցվում են ուղիղ-գծային մեթոդով:

4. 2019 թ.-ի դեկտեմբեր ամսին նեքին աուդիտը բացահայտել է կոռուպցիոն սխեմա, որի արդյունքում դեբիտորական պարտքերի հավաքագրման ավագ մասնագետը կարողացել է յուրացնել 4 մլն-ի հավաքագրված գումարներ՝ դրանք չարտացելով դրամական միջոցներում: Այս յուրացումը որևէ կերպ հնարավոր չէ վերականգնել, քանի որ ավագ մասնագետը լքել է երկիրը: Այս 4 միլիոնից 1-ը վերաբերում է անցած տարվան, իսկ մնացածը՝ հաշվետու տարվան:

5. Փորձնական հաշվեկշռում ճանաչված հարկային մնացորդը վերաբերում է նախորդ տարի պակաս հաշվեգրված շահութահարկի ծախսի գնահատականին: 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հարկային ծախսը կազմում է 2,5 մլն դրամ: Ի լրումն հաշվետու տարվա ընթացքում 12 մլն դրամ են կազմել ժամանակավոր տարբերությունները, որոնց գծով առաջանալու է հետաձգված հարկային պարտավորություն: Մանանա ՍՊԸ-ն վճարում է շահութահարկ 25% դրույքով:

Պահանջվում է.

Ա. Պատրաստել Մանանա ՍՊԸ-ի համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար:

Բ. Պատրաստել Մանանա ՍՊԸ-ի սեփական կապիտալի շարժի մասին հաշվետվություն 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար:

Գ. Պատրաստել Մանանա ՍՊԸ-ի Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(20 միավոր)

Դ. Մանանա ՍՊԸ-ն ցանկանում է ձեռք բերել մեկ այլ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր: Այդ նպատակով ընտրվել են երկու նմանատիպ կազմակերպություններ, և իրականացվել են այդ ընկերությունների հրապարակային հաշվետվությունների հիման վրա գործակիցներով վերլուծություններ:

Նշել նման վերլուծության թերությունները և ի՞նչպես կարելի է նշված թերությունները մեղմել ու ճիշտ որոշում կայացնել

(5 միավոր)

(Ընդամենը 25 միավոր)

Հարց 3.

Ստորև ներկայացված տեղեկատվությունը վերաբերում է **Ալեռ** ընկերությանը.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2019 AMD՛000	2018 AMD՛000
Ակտիվներ		
Ոչ-ընթացիկ ակտիվներ		
Շենք, շինություն և սարքավորումներ	572,000	496,000
Ոչ նյութական ակտիվներ	40,000	50,000
	612,000	546,000
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	140,000	155,000
Դեբիտորական պարտքեր	130,000	110,000
Ներդրումներ	95,000	20,000
Դրամական միջոցներ	7,000	3,000
	372,000	288,000
Ընդամենը ակտիվներ	**984,000**	**834,000**
Սեփական կապիտալ և պարտավորություն		
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ (յուրաքանչյուրը 1000 դրամ)	230,000	200,000
Էմիսիոն եկամուտ	45,000	35,000
Կուտակված շահույթ	166,000	147,000
Վերագնահատման պահուստ	22,000	12,000
	463,000	394,000
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարձակալական պարտավորություն	49,000	30,000
Վարկեր և փոխառություններ	31,000	65,000
Պետական շնորհ (գրանտ)	80,000	75,000
Հետաձգված հարկային պարտավորություն	30,000	26,000
	190,000	196,000
Ընթացիկ պարտավորություններ		
Երաշխիքների գծով առաջացած պահուստ	72,000	67,000
Առևտրային կրեդիտորական պարտքեր	220,000	116,000
Բանկային օվերդրաֆտ	8,000	20,000
Վարձակալական պարտավորություն	5,000	3,000
Տոկոսային պարտավորություններ	2,000	8,000
Պետական շնորհ (գրանտ)	10,000	20,000
Շահութահարկի գծով պարտավորություն	14,000	10,000
	331,000	244,000
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություն	**984,000**	**834,000**

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն դեկտեմբերի 31-ին

	2019 ՛000
Հասույթ	315,000
Ինքնարժեք	(206,500)
Համախառն շահույթ	108,500
Իրացման ծախսեր	(11,500)
Վարչական ծախսեր	(30,000)
Ֆինանսական ծախսեր	(17,000)
Ներդրումային եկամուտ	3,000
Շահույթ մինչև հարկերը	53,000
Շահութահարկի գծով ծախս	(22,000)
Տարվա շահույթ	31,000

Հետևյալ տեղեկատվությունը ևս վերաբերում է Ալեռ ընկերության ֆինանսական հաշվետվություններին:

1. Հիմնական միջոցներ

   Տարվա ընթացքում ակտիվներ, որոնց հաշվեկշռային արժեքը 31 միլիոն էր, վաճառվել են 21 միլիոնով: 2019թ.-ի ընթացքում վարձակալված ակտիվների գծով, որոնք դասակարգվել են հիմնական միջոցների հոդվածում, ճանաչվել է 28 միլիոն դրամի Օգտագործման-իրավունքով-ակտիվ (ՕԻԱ) և նույն գումարով՝ վարձակալության գծով պարտավորություն: Մաշվածության գծով ծախսը հիմնական միջոցների, ներառյալ ՕԻԱ-ների գծով, տարվա համար կազմել է 37 միլիոն:

2. Պետական շնորհ-գրանտ

   55 միլիոն գրանտային եկամուտ է կրեդիտագրվել գործառնական ծախսերին:

3. Ոչ նյութական ակտիվներ

   Ոչ նյութական ակտիվների գծով չեն եղել ձեռքբերումներ և օտարումներ տարվա ընթացքում:

4. Կարճաժամկետ ներդրումներ

   Կարճաժամկետ ներդրումներ, ընթացիկ ակտիվների կազմում իրենցից ներկայացնում են 30 օրյա բարձր իրացվելի պետական պարտատոմսեր:

5. Երաշխիքային պարտավորություն

Երաշխիքների գծովառաջացած պահուստը ընդգրկում է վաճառված ապրանքների գծով, որոնք ունեն երաշխիք, սպասվելիք վերանորոգման ծախսերը: Պահուստը նաև ծախսագրվել է և ընդգրկվել ինքնարժեքի ծախսերում:

6. Բաժնետոմսեր

Հունվարի 30-ին 2019 թվական տեղի է ունեցել բոնուսային բաժնետոմսերի թողարկում յուրաքանչյուր 20 բաժնետոմսի դիմաց 1 նոր բաժնետոմս: Թողարկումը տեղի է ունեցել էմիսիոն եկամտի հաշվին: 2019թ.-ի մարտ ամսին ի լրումն տեղի է ունեցել բաժնետոմսերի թողարկում անվանական արժեքով՝ կանխիկ վճարման դիմաց:

Տարվա ընթացքում արտարժույթի փոփոխության գծով էական օգուտ/կուրուստներ չեն եղել: Հիմնական միջոցի վերագնահատումը չունի հարկային հետևանք և տարվա ընթացքոում վերագնահատման պահուստից կուտակված շահույթ տեղափոխություն տեղի չի ունեցել:

Պահանջվում է

Պատրաստել Ալեռ ընկերության դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը անուղղակի մեթոդով՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար:

(Ընդամենը 20 միավոր)

Հարց 4 ՖՀՄՍ 15 և հայեցակարգային հիմունքներ

Ա. Թվարկել և համառոտ նկարագրել հասույթի ճանաչման 5 փուլերը՝ համաձայն «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ՖՀՄՍ 15 -ի:

(5 միավոր)

Բ. ՄՏՄ Ընկերությունը վաճառում է սարքավորումներ և միևնույն ժամանակ իրականացնում է այդ սարքավորումների սպասարկում: ՄՏՄ Ընկերություն հաշվետու տարին ավարտվում է դեկտեմբերի 31-ին: Դեկտեմբերի 1-ին Ընկերությունը վաճառում է սարքավորում 800,000 դրամ արժողությամբ : Այս գնի մեջ է ընդգրկված նաև 2 տարվա սարքավորումը սպասարկելու արժեքը՝ 240,000 դրամ, ինչպես նաև միանվագ տեղադրման արժեքը՝ 50,000 դրամ:

Որքա՞ն հասույթ պետք է ճանաչի ՄՏՄ Ընկերությունը դեկտեմբերի 31-ին համաձայն ՖՀՄՍ 15-ի.

(2միավոր)

Գ. Սարքավորումների վաճառքով զբաղվող ՄՏՄ ընկերությունը 2019թ.-ի սեպտեմբերի 30-ին վաճառում է սարքավորում 10 միլիոն դրամ արժեքով, որի դիմաց վճարումը պետք է ստանա 2 տարի անց: ՄՏՄ ընկերության համար համապատասխան զեղչման տոկոսադրույքը 6 տոկոս է:

Ինչպիսի՞ ձևակերպումներ պետք է տաՄՏՄ Ընկերությունը 2019թ.-ի դեկտեմբերի 31-ին և 2020 թվականի դեկտեմբերի 31-ին՝ այս գործարքը իր հաշվետվություններում ՖՀՄՍ 15-ով արտացոլելու նպատակով:

(3 միավոր)

Դ. Հիմք ընդունելով 2018թ.-ին Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների ամբողջական վերանայված տարբերակը, գրել ակտիվների և պարտավորությունների սահմանումները:

(2 միավոր)

Ե. ՄՏՄ Ընկերությունը իրականացնում է նաև շենքերի կառուցում և վաճառք:2019թ.-ին կնքել է հետևյալ պայմանագրերը, որոնց վերաբերյալ 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի հետևյալ ցուցանիշները.

Պայմանագրեր	1	2	3
	AMD՛000	AMD՛000	AMD՛000
Պայմանագրի գին	10,000	8,000	4,000
Մինչև դեկտեմբերի 31-ը կատարված ծախսեր	(6,000)	(4,000)	(500)
Ավարտուն վիճակի հասցնելու համար անհրաժեշտ ծախսեր	(1,000)	(6,000)	(2,000)
Ավարտունության աստիճան	80%	60%	25%
Գրված հաշիվներ	7,000	3,000	750

Պայմանագիր 1-ի համար գրել որքա՞ն հասույթ պետք է ճանաչել 2019թ.-ի ֆինանսական հաշվետվություններում:

(0.5 միավոր)

Պայմանագիր 2-ի համար որքա՞ն ինքնարժեքի ծախսեր պետք է ճանաչել 2019թ.-ի ֆինանսական հաշվետվություններում:

(1 միավոր)

Պայմանագիր 3-ի համար, որքա՞ն պայմանագրային ակտիվ կամ պարտավորություն պետք է ճանաչել 2019թ.-ի ֆինանսական հաշվետվություններում:

(1.5 միավոր)

Ընդամենը հարց 4՝ 15 միավոր

Հարց 5 ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 33, ՖՀՄՍ 16,

Ա. Համաձայն «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ի ֆինանսական ակտիվները դասակարգվում են ինչպիսի՞ տեսակների, և ի՞նչ մոդելներ են ընկած այդ դասակարգման հիմքում:

(5 միավոր)

Բ. ԱՐ Ընկերությունը 1 հունվարի 2018թ.-ին ձեռք է բերում պարտքային ֆինանսական գործիք իր իրական արժեքով, վճարելով 500,000 դրամ: Անվանական արժեքը այդ գործիքի կազմում է 550,000 դրամ և պետք է մարվի 5 տարուց: Պարտքային գործիքը ենթադրում է 6 տոկոս ֆիքսված դրույքով շահաբաժինների վճարում յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ին: Գործիքի էֆեկտիվ տոկոսադրույքը 8 է: ԱՐ Ընկերությունը որոշել է գործիքը չափել ամորտիզացված արժեքով:

Ինչ՞ արժեքով կարտացոլվի այս պարտքային գործիքը ԱՐ ընկերության 2019թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական վիճակին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում :

(2 միավոր)

Գ.ԱՐ Ընկերությունը 2019թ.-ի հունվար 1-ին ուներ թողարկված 160 միլիոն հատ 500-դրամանոց բաժնետոմսեր: Ապրիլի 1-ին ընկերությունը իրականացրեց բոնուսային թողարկում՝ յուրաքանչյուր 5 բաժնետոմսի համար տալով 1-ը: Սեպտեմբերի 1-ին ընկերությունը իրականացրեց նաև իրավունքների թողարկում, յուրաքանչյուր 4 բաժնետոմսի համար տալով 1-ը՝ 1200 դրամով: Նախքան թողարկումը բաժնետոմսերի շուկայական գինը 2000 դրամ էր: 2019թ.-ի շահույթը կազմել է 31 . 5 միլիոն դրամ:

Հաշվել մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը 2019թ.-ի դեկտեմբերի 31-ին:

(4 միավոր)

Դ. Համաձայն «Վարձակալություն» ՖՀՄՍ 16-ի, նշել և համառոտ մեկնաբանել այն 2 հանգամանքները, որոնց դեպքում Վարձակալները կարող են ընտրել վարձակալության հաշվառման պարզեցված ընթացակարգ՝ այսինքն այդ հանգամքներում Չճանաչել «Օգտագործման իրավունքով ակտիվ»:

(2 միավոր)

Ե. Համաձայն ՖՀՄՍ 16-ի ի՞նչ ժամկահատվածում պետք է ամորտիզացնել վարձակալության գծով ճանաչված Օգտագործման իրավունքով ակտիվը:

(2 միավոր)

Ընդամենը հարց 5՝ 15 միավոր